ԳՈՒՐԳԵՆ ՉՈԼԱԽՅԱՆ

Ծնվել է 1909թ., Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) քաղաքում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքում: 1928թ. ավարտել է Երևանի արդյունաբերական տեխնիկումը: Աշխատանքային գործունեությունն սկսել է Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանում՝ որպես արտադրա-տեխնիկական բաժնի պետ:

1932-1939թթ. սովորել է Մոսկվայի Բաումանի անվան ինստիտուտում, միաժամանակ աշխատել է ավտոտրակտորային ԳՀԻ-ում՝ որպես կոնստրուկտոր: Վերադառնալով Երևան՝ աշխատանքի է անցել Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանում:

1939թ. նշանակվել է ՀԽՍՀ տեղական արդյունաբերության ժողկոմ, 1941թ.՝ Ժողտնտխորհի նախագահի տեղակալ՝ միաժամանակ մնալով տեղական արդյունաբերության ժողկոմի պաշտոնում: 1945-1947թթ.՝ ՀԽՍՀ ժողտնտխորհի նախագահի տեղակալն էր, ԽՍՀՄ կառավարությունում Հայկական ՍՍՀ մշտական ներկայացուցիչը:

1950թ. հեռակա կարգով ավարտել է Մոսկվայի պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինական ֆակուլտետը: 1948-1955թթ. Երևանի <<Հայէլեկտրագործարանի>> տնօրենն էր:

1955թ. Գ. Չոլախյանն ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ: 1957թ. աշխատանքի է անցնել ՀՍՍՀ ժողտնտխորհում՝ որպես էլեկտրատեխնիկական արդյունաբերության և սարքաշինության վարչության պետ, 1961թ.՝ Ժողտնտխորհի նախագահի տեղակալ, այնուհետև՝ նախագահ:

Մահացել է 1994 թվականին: